Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5594
5595
5596
5597
5598
5599
5600

9(47.925
S 46

БИБЛІОТЕКА
Г. А. ХАЛАТЬЯНЦА
№ 65.

9(56).04
Կ.
№ 65

ԵՐԱՆԱՎԵՏ

ՏԵՂԵԿԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԿԻՆ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ

ԱՑՑԵԼՈՒԹԵԱՄԲ ՆԱԹԱՆԵԱՆ ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Հայ. 65

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՃԷՉՎԷՃԵԱՆ

)(1871)(

12960



5646
38

ՑԱՌԱՋԱԲԱՆ

1870 սեպտեմբեր 10 ին Խրիմեան Սրբազան Պատրիարքք Հօր հրամանաւ և կոնդակաւ այցելութեան պաշտօնիւ Նիկոմիդիոյ վիճակը ուղեւորեալ՝ և Նիկոմիդիոյ Առաջնորդարանը երկու աւուր չափ կենալէ ետքը, նոյն ամսոյն 12 ին սկսանք այցելութիւն ընել վիճակայնոց. նախ ի Նիկոմիդիայ և վերջը բոլոր վիճակները՝ որոնց վրայ ստացած տեղեկութիւններս մի առ մի հոս կը գծեմ ի դիտողութիւն Սրբազան Հօր և Ազգասէր Պատրիարքի, և Ազգանամ Կեդրոնական վարչութեան. և ապագրութեամբ ի լոյս կընծայեմ ի տեղեկութիւն սիրելի ազգայնոց։

1871 մարտ 31

Բարեմաղթու
Պօղոս Վարդապետ
Նաթանեան

Ի Կ. Պոլիս

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԿԻՆ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ

ՆԻԿՈՄԻԴԻԱ.

Այս քաղաքը Իզմիտու ծովածոցին՝ որ ի հնումն Ասդակեան ծոց կըսուէր, սպառած տեղը հիւսիսային կողմի ծովեզերքը մէկ փոքրիկ բլրակի մը վրայ շինուած է, և իւսկիւտարէն 18 ժամ և Պօլսէն շոգենաւով 7 ժամ հեռաւորութիւն ունի։ 2382 տուն է կըաղկանայ և մէջը չորս տեսակ ազգ կայ. Հայ, Յոյն, Տաճիկ և Հրէայ։

Հայք 500 տամբ թաղ մը կկազմեն առանձինն. և ասոնց թիւը գրեթէ 2500ի կհասնի. ունին յունուն Ս. Աստուածածնայ կառուցեալ փառաւոր և քարուկիր հոյակապ եկեղեցի մը, որուն աջ դիի պահարանի մէջ Արեւելեան կողմը մարմարոնեայ շէնքով խիստ գեղեցիկ մկրտութեան Աւազան մը կայ և որուն նմանը երբեք չէ տեսնուած. և յիշեալ եկեղեցին ունի հինգ Քահանայ. որք են՝ Աբժ. Տ. Արիստակէս, Տ. Յակոբ, Տ. Յարութիւն, Տ. Ներսէս. և Տ. Մեսրոպ. ասոնց երկուքը Արմաշուաշակերտներէն են։ Հոյակապ և ծովահայեաց Առաջնորդարան մը ունին Եկեղեցւոյն մօտ 7 սենեկէ

բաղկացեալ. թէ և եկեղեցին իրեն թէ արական և թէ իգական սեռից համար դպրոցներ ունի՝ բայց ողորմելի բաներ են։ Թէ և իրեն տարեկան 10,000 ղուրուշի չափ եկամուտ ունի, բայց և այնպէս երկու սեռին դպրոցն ալ վերջին աստիճանի խեղճութեան մէջ և գրեթէ գոցուած միչտ տղայք ասդիս անդին ցրուած են. թէ և ժողովուրդը ասոր դէմ կրողոքէ, բայց ժողովականք ամենեւին չեն զգար. որոնք չատ լսելնուն՝ սովորական բան մը եղած է իրենց համար. ժողովրդեան մեծ մասը աղքատ և փոքր մասը հարուստ է։

30,000 կանդնաչափ մեծ գերեզմանատունը մը ունին ծովու եղերքը՝ որուն մէջն է եղած երկուց բիւրոց նահատակութիւնը, զոր միչտ կտոնախմբէ Ս. Եկեղեցին Հայոց. որ ի հնուց քարուկիր հոյակապ փառաւոր եկեղեցի կայ եղեր, բայց այժմ խոնարհած և աւերակ դարձած և գետնի հետ հաւասարած ըլլալով՝ մինակ կամարներէն կնչմարուի եկեղեցի կենալը։

Ցոյնք 150 տամբ առանձին թաղ մը կնստրկայացընեն քաղաքին մէջ և իրենց բոլոր թիւն է 750, գրեթէ ունին մէկ եկեղեցի և մէկ դպրոց, որ յառաջադիմութեան մէջ է. և քաղաքէն 1/4 ժամ հեռաւորութեամբ վանք մը ունին հոյակապ Ս. Պանդելեոն անուամբ, յորում է և Սրբոյն գերեզմանը, և կվկայեն թէ 1,500 տարուան գերեզման է, և որուն Ս. մարմինը Եւրոպիոյ մէջ է կըսեն, և աջ ձեռքի երեք մատերը միայն մնացած կայ յիշեալ վանուց մէջ. և յիշեալ գերեզմանին մօտ ջրհոր մը կայ քաղցրահամ, որ բժշկութեան ջուր կկոչուի։

Ցանիկք 1,400 տունէ կբաղկանան և բնակչաց

թիւն է 4,000, և 25 ի չափ մեծ և փոքր մզկիթներ ունին և մէկ քանի ալ դպրոցներ զուրկ յուսմանց տակաւին Եգիպտական խաւարին մէջ են. բայց ոչ այնչափ մոլեռանդ. Քրիստոնէից հետ սիրով կապրին, ոմանք արհեստաւոր են և ոմանք հողագործ, վաճառականք սակաւաթիւ, և իշխանութեան դուռ մը կայ՝ ուր կընակի մութասարիֆ փաշայն իր զինուորներով, և ունի մեծ արքունի նաւարան մը, որուն քով է Ցերութեան պալատը խիստ փառաւոր, որուն համար կըսուի թէ Ցուլիանոսի պալատին տեղը շինուած է և կամ Մաքսիմիանոսին։ Ամենայմէ զատ 30 տունի չափ Բողոքական կայ որոնց թիւը 120 ի կհասնի. ժողովարան մը և դպրոց մը ունին և մէկ քարոզիչ (Միսիոնար). դպրոցնին բաւական յառաջացած է։ Կայ նաև երկու տուն Պապական բնիկ, և 20 ի չափ պանդուխտ. ոչ եկեղեցի և ոչ դպրոց ունին. Յովսէփ Ամվաղեան անուամբ վարդապետը ունին՝ որ անիկայ կը կառավարէ բոլոր այս կողմի պապականները։

Հրեայք 20 կամ 30 տունէ կբաղկանան առանձին թաղով և բնակչայ թիւը 120 ի չափ է. մէկ սինագոկայ մը ունին. բայց ժողովուրդը միջին աստիճանի մէջ է։

ՏԱՂ ԳԻՒՂ

Այս գիւղը 20 տունէ կբաղկանայ, որ կելլայ 100 ի չափ անձ. ունին մի՝ եկեղեցի (ախշամ՝) յանուն Ս. Երեւման խաչ կառուցեալ, մէկ քահանայիւ Տ. Գալուստ անուամբ, և ունին դպրոց մը փոքրիկ՝ որուն մէջ հասարակ ընթերցմունք կկար-

գան տղայք, և ժողովուրդք հողագործ են ընդ-
հանրապէս, տգէտ և աղքատ։

ԱՐՄԱՇ

Այս գիւղը Նիկոմիդիայէն 6 ժամ հեռի է հիւ-
սիսային արեւելեան կողմը. ասոր մէջ կայ յանուն
Ս. Աստուածածնայ կառուցեալ վանք մը, և վանքը
իրեն յատուկ դիշերօթիկ դպրոց ունի, ուսկից կել-
լեն վանքին բոլոր միաբաններքը, և Նիկոմիդիայի
վիճակի վարժապետաց մեծ մասը՝ և ուսեալ քահա-
նայք այս դպրոցի աշակերտներէն են։ Գիւղն ալ
զատ իրեն դպրոց ունի, բայց գիւղին մէջ անմիա-
բանութիւն կենալուն, և առանձին դպրոցին հաս-
տատուն եկամուտ չիկենալուն՝ վարժապետին վարձքը
վանքը կը վճարէ. և որովհետև վանքն ալ ցաճա-
րին շինութեան պատճառաւ նեղ վիճակի մէջ կը
գտնուի. ուստի և գիւղի դպրոցն ալ առ այժմ ե-
րեսի վրայ ձգուած է. ասիկայ ունի 190 տուն և
իբր 1000 բնակիչ. և ունի երկու քահանայ Տ. Կա-
րապետ. և Տ. Ստեփան անուամբ. և ժողովուրդք
ընդհանրապէս շերամագործ և հողագործ են. բայց
զուրկ բարոյականութենէ։

ԽԱՍԿԱԼ

Այս գիւղը 80 տունէ կ'բաղկանայ մէկ ժամ հե-
ռի Արմաշէն անոր դիմացը. որուն մէջ տուն մը բո-
ղոքական կայ և մէկ տուն ցաճիկ. շինուած է բարձր
բլրի մը վրայ և 400 ի չափ բնակիչ կայ մէջը. ունին
եկեղեցի մի յանուն Ս. Յակոբայ կառուցեալ մեկ

քահանայիւ Տ. Արսէն անուամբ. և մէկ դպրոց ու-
նին որ եկեղեցւոյն դոյացած շահուն կսպասէ և մէջը
30 ի չափ տղայք կան, որոնք հասարակ ընթերցա-
նութեան կը պարապին. ժողովուրդք հողագործ և
շերամագործ են ընդհանրապէս. բայց ողորմելի վի-
ճակ ունին։

ԱԼՄԱԼԸ

Խասկալէն երեք ժամ հեռաւորութեամբ արևե-
լեան կողմը բարձր բլրի մը վրայ հաստատուած
գիւղ մի է 40 տնէ բաղկացեալ. և բնակիչք առ հա-
սարակ 200 ի կհասնի համեմատական հաշուով. և ու-
նին մի փառաւոր փոքրիկ եկեղեցի յանուն Ս. Կա-
րապետի կառուցեալ. երկու քահանայիւք. Տ. Յա-
կոբ և Տ. Խորէն անուամբ. և եկեղեցին ունի ի-
րեն յատկացեալ դպրոց մը աղքատիկ. որ եկեղեց-
ւոյն դոյացած շահուն կսպասէ միշտ. և որուն մէջ
30 ի չափ տղայք կը աստիարակուին հասարակ հա-
մարատուի մը ձեռօք. և ժողովուրդք մեծաւ մա-
սամբ հողագործ և շերամագործ են, բայց աղքատ
և տգիտութիւնը տիրած է։

ՓԸՆՏԸԽԼԸ

Ալմալը յէն ժամ ու կէս հեռաւորութեամբ դե-
ղեցկադիր վայր մի է. երեք մասով երկու Աղդերէ
բաղկացեալ Հայ և Հայ-Հռոմ 260 տան չափ. որոնց
մէջէն 20 տուն բուն Հայ կայ, առ հասարակ 80 բը-
նակչով. և ունին յանուն Ս. Կարապետի կառուցեալ
փոքրիկ փայտաշէն եկեղեցի մը. որուն դուռը եր-

կու տարիէ ի վեր գոց է. քահանայ չունենալնուն համար. Թէպէտ Ցէր Սիմէօն անուամբ քահանայ մի ունին եղեր յառաջ, բայց նա ալ պարտիզակի ըլլալով իւր ուխտաղանցութեամբը թողեր գացեր էր. որ այժմ Պարտիզակի կողմերը թափառական կը ման. և յիշեալ եկեղեցին 5000ի մօտ դրամ ունի եղեր. բայց քննեցինք որ ի վաղուց ոչնչացեր է. ունին Թէպէտ աղքատիկ դպրոց մը որուն մէջ 5 տղայի չափ հասարակ ընթերցման կպարապին. բայց անտէր և անօգնական. և ժողովուրդք ընդհանրապէս հողագործ են և շերամագործ սակաւաթիւ և խիստ թշուառ կացութեան մէջ։

Հայ-հռոմ 244 տուն է կրաղկանան և բնակիչք առ հասարակ 1140ի կ'հասնին համեմատական հաշուով և ունին երեք եկեղեցի փառաւոր հոյակապ ուրեանց յատկացեալ դպրոցներովը յառաջադէմ վիճակի մէջ. և են ընդհանրապէս հողագործ և շերամագործ. ունին բաւական հարստութիւն և իրենք ըստ որում ի բնէ Հայ յունարէն լեզուն չգիտնալով բուն Հայերէն կլսօին բայց ընթերցմունքնին Յունարէն է. և երկու ազգ խիստ սիրով կ'վարվին իրարու հետ. որ տեսնողը յիրաւի կ'զարմանայ։

ՖԷՐԻԶԼԻ

Ֆընտիկը գիւղէն մէկ ժամ հեռաւորութեամբ արևելեան կողմը փոքրիկ բլրի մը վրայ հաստատուած գիւղ մի է 150 տունէ բաղկացեալ. և բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով 800 ի կ'հասնին և ունի իր մէջ յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ հոյակապ եկեղեցի մը երկու քահանա-

յիւք Տ. Պօղոս Աւագ քահանայ և Տ. Մարտիրոս անուամբ. և եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը ունի որուն մէջ 100 ի չափ երկսեռ աշակերտք կ'դաստիարակուին Արմաշու ուսումնարանէն եկած հայկազանի մը ձեռօք. այսինքն արական և իգական սեռի աշակերտանկրէն 20 ի չափ աշակերտք և աշակերտուհիք քերականութիւն և թուաբանութիւն դաս առնելով բաւական յառաջդիմութեան քայլ մը առած էին. և ունի յիշեալ դպրոցը թանգարան մը բարեկարգ վիճակի մէջ որուն շահովը և միանգամայն եկեղեցւոյ գոյացած արդիւնքովը կ'կառավարուի դպրոցը. բայց ժողովուրդք անհոգ վարժուելնուն բոլորովին անզգայ դարձած են. և աշխատութիւններն հողագործ և շերամագործ են վերջապէս մեծ ցաւ և կսկիծ կ'պատճառէ ազգասէր սրտերու՝ երբոր կ'տեսնայ ժողովրդոց մեռելութիւնը։

ԹԱՄԼԸԽ

Ֆերիզլի գիւղէն մի ժամ հեռաւորութեամբ գեղեցկադիր վայր մի է 60 տունէ բաղկացեալ. և բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով 300 ի կ'հասնին. և ունին մի փայտաշէն եկեղեցի յանուն Ս. Գէորգայ կառուցեալ հին և խարխուլ վիճակի մէջ մէկ քահանայիւ Տ. Սահակ անուամբ. և յիշեալ եկեղեցին 3500 ի չափ դրամ ունի եղեր. բայց ի վաղուց կորուսեալ և եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մի խեղճ վիճակի ենթարկուած որուն մէջ հազիւ 22 տղայի չափ հասարակ համարտեսի մը ձեռօք կ'դաստիարակուին. խիստ ողորմելի տեսարան. և յիշեալ 60 տան մէջէն 3 տուն բաղ-

քական կայ 15 անձէ բաղկացեալ. և կայ 15 տարիի մօտ հաստատուելը. ունին թէպէտ ժողովարան մը. և քարոզիչնին 3 ժամ հեռաւորութեամբ Ատաբազարէն կուգայ քարոզելու և դպրոց ոչ ունին. բայց զարմանալին սա է որ՝ իրենց ունեցած թիւէն աւելցած չունին երբէք այսչափ տարուան մէջ և ժողովուրդք տեղւոյն այսպէս վկայեցին. և առ հասարակ են հոգագործ և շերամագործ. և զուրկ բարոյական մասին։

ՆՈՐ ԳԻՒՂ

Թամլրխէն կէս ժամ հեռաւորութեամբ ձորի մը մէջ հաստատուած 21 տունէ բաղկացեալ փոքրիկ գիւղ մի է. և բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով 100 ի մօտ կըլլան. և ունին մի փոքրիկ յանուն Ս. Կարապետի կառուցեալ եկեղեցի փայտաշէն. որուն դուռը մէկ տարիէն աւելի է որ գոց է. թէպէտ տարի մը յառաջ Տ. Կարապետ անուամբ քահանայ մը ունին եղեր Ատաբազարցի. բայց առաւել շահու մը նպատակաւ ձգեր ժողովուրդը իւր տեղը գացեր է. ուստի ժողովուրդք այժմ առանց քահանայի մնալովին յուսահատած են. բայց ունին դպրոց մը գրեթէ գոցուած. որովհետև հասարակ համարատու անդամ չկայ և ժողովուրդք են հոգագործ և շերամագործ և մեծաւ մասամբ աղքատ և զուրկ բարոյական մասին. վերջապէս թշուառ կացութիւն որ ճշմարիտ Հայու մը սիրտ չի դիմանար, երբ որ տեսնայ այս ցաւալի տեսարանը։

ԱՏԱՐԱԶԱՐ

Նոր գիւղէն 3 ժամ և Նիկոմիդայէն 8 ժամ հեռաւորութեամբ ընդարձակ դաշտի մը վրայ գտնուող գիւղիս մը և թթենեաշատ վայր մի է. ունի երեք հաղար տուն երեք Ազգերէ բաղկացեալ՝ Հայ, Յոյն և Տաճիկ. Հայք 1300 տունով առանձին թաղ մը կը կազմեն. որոնց բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով 6500ի կ'հասնի. ունին չորս Եկեղեցի հոյակապ մեծ և փառաւոր կառուցեալ յանուն Ս. Հրեշտակապետաց. Ս. Կարապետի. Ս. Լուսաւորչի և Ս. Ստեփաննոսի։ Ս. Կարապետի և Ս. Լուսաւորչի Եկեղեցիք ունին չորսական Քահանայ. և Ս. Հրեշտակապետ Եկեղեցին 6 Քահանայ. և Ս. Ստեփաննոս մէկ Քահանայ. և Եկեղեցւոյ թուոյն համեմատ չորս թաղի բաժնուած ամեն Եկեղեցի իրեն յատկացեալ արական և իգական սեռի դպրոցներ ունի. և միանգամայն թանգարաններ հաստատուած կանոնց. որ ամեն կիւրակէ առաւօտ յետ Եկեղեցւոյ աւարտման ընդհանրապէս կ'ուսանին յիշեալ թանգարանաց մէջ Ազգային Պատմութիւն և Քրիստոնէական վարդապետութիւններ մտիկ ընելու, բայց 'ի արական սեռէն. և ունին իրենց մէջ յատկապէս վեցական հոգիէ բաղկացեալ խնամակալուհի տիկնայք, որ իրենց թանգարանին և միանգամայն օրիորդաց դպրոցի հոգատարձութեան պաշտօն կվարեն անձնուիրաբար։

Եւ արական սեռի դպրոցն ալ միևնոյն յառաջդիմութեան մէջ է, կամ քիչ մալ աւելի. բայց յիշեալ չորս թաղի դպրոցները եկեղեցւոյ եկամուտ

տով կ'յարատևէն. առանձին իրենց յատկացեալ եկամտից պակուրթենէն. և ունին մէկ ուսումնարան, որուն եկամուտը քաղաքացոց քսակէն կ'սպասուի. և ունի իր մէջ լաւ հայկական մը տաճկերենով հետ մեկտեղ, որ 40 ի չափ աշակերտ ուսման կ'պարապին, այսինքն առաջին կարգի աշակերտ քերականութիւններն ուսուցած թարգմանութիւններ և դրսաւոր շարադրութիւններ գրելու կարողութիւն ունին նաև թուականութիւնն ալ և բաւական Տաճկերենի մէջ յառաջացած. երկրորդ կարգինները ութը մնացեալ բանին ուսուցած համառձայնութեան մէջ են. և երրորդ կարգինները ութը մնացեալ մէջ, որուն հետ կուսանին նաև Աղդային և Սրբազան պատմութիւն, յիշեալ Հայկական պատուելիի ջանիւք որ Աբմաշու ուսումնարանէն եկած է. նաև ի բաց առեալ Ս. Սահականոսի թաղը, որն որ առանձին թաղ մը ըլլալով 60 տունէ բաղկացեալ հաղիւ հազ 60 աշակերտ ունի, բայց ուսման ճաշակը այնչափ առած չեն. գեղեցիկ սեռին դասախարակութիւնը որ առ ոչինչ համարուած էր, և այս մասին անտոյթ էին առջի բերանը, բայց ներկայիս մէջ ապագային համար գեղեցիկ յոյսեր կուտան, և օր քան զօր յառաջդիմութեան յոյս կայ, և ընդհանրապէս վաճառականութեամբ կապրին Հայք. շերամագործութիւնը յաճախեալ է. և հարստութեան մեծ և առաջին աղբիւրը այս է. աշխատասէր է՝ բայց ոչ այնչափ հարուստ. գոհ է և խնայող, և իր խառնուածքին բերմանը էն հլու և հնազանդ։

Յոյնք քաղաքին արևմտեան կողմը առանձին

թաղ մը կ'ներկայացնեն 300 տունէ բաղկացեալ. ունին երկու եկեղեցի, և եկեղեցիներուն կից երկու դպրոց երկսեռ. Հայոց պէս կիսով մասամբ արհեստաւոր և վաճառական են։

Տաճիկք ցրուեալ դիրք մը ունին քաղաքին շուրջը տարածեալ, և 4 մկիթի, և մէկ դպրոց արքունական. ուսման ճաշակը բնաւ առած չէն. տակաւին Եղիպտական խաւարին մէջ կ'թարթափին, ոչ այնչափ մոլեռանդ, և Քրիստոնէից հետ սիրով կապրին. ընդհանրապէս երկրագործ են. իրենց մէջ արհեստաւորք միջակ են և վաճառականք սակաւաթիւ։

Բողոքական 30 տունի չափ խառն ընդ Հայս. ունին ժողովատեղի մը և մէկ Միսիոնար (քարոզիչ) բայց իրենց թիւէն աւելի երբէք չտոցած չունին եղեր։ Կան նաև դաղթականք 30 տունէ բաղկացեալ Թոխատացի Աղդէն. և են արհեստաւոր և երկրագործ. կրօնք Մահմէտականք։

Քաղաքին դիրքը նկարող հետաքրքիր Աղդ մը իւր հետաքրքրութիւնը հաղեցընելու դիրք մը չկրնար ընտրել. ըստ որում դաշտային արևելեան կողմէն Սանդարիա գետը իւր սրընթաց ալիքները դէպի Պոնտոս կ'հոսի. քաղաքին արևմտեան կողմէն Սապանճայի լճին ջուրը փոքրիկ գետ մը ձևացեալ կանցնի, և Ցերիզլի գիւղին գոմէն, որ Ատաբաղարէն 4 ժամ հեռաւորութիւն ունի Սանդարգետը կհոսի։ Այս ջուրին վրայ շինուած է այն մեծադիր անիւը ուրկից ջրամբարներէն խողովակներով ջուրը աղբիւրներուն կ'բաժնուի. Քաղաքը նոյն կերպ կղզիացեալ դիրք մը ունի։

ԿԷՑՎԷՑԻ ՄԻՋԱԳԻՒՂ

Ատաբաղարէն 8 ժամ և Կէյվէն ժամ ու կէս հեռաւորութեամբ բարձր լեռան մը գագաթան վրայ հաստատուած բարձրադիրակ գիւղ մի է՝ Կէյվէյի առևելեան կողմը որուն մէջ երկու ազգէ բնակութիւն կայ, Հայ, և Յոյն։ Հայերը 200ի մօտ ընտանիքէ կը բաղկանան, որ առ հասարակ համեմատական հաշուով 1000 բնակիչ կելլայ, ունին յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ հին եկեղեցի մը աղիւսակիր երեք քահանայիք. որոնց անուանքն են. Տ. Թադէոս Աւագ քահանայ. Տ. Գաւրիել. և Տ. Հմայակ. և Եկեղեցին ունի իրեն յատկացեալ երկոեռ դպրոց կրկնայարկ, որուն մէջ 250 աշակերտք և աշակերտուհիք կ'դաստիարակուին Արմաշու ուսումնարանէն եկած կատարեալ Հայկաբանի մը ձեռօք. նաև քերականութեան թուադիտութեան մէջ յառաջադէմ աշակերտք և աշակերտուհիք ալ կը գտնուին, միանգամայն Սրբազան պատմութիւն և Քրիստոնէական վարդապետութիւն ալ կ'շարունակուի, և դպրոցը տարեկան 12000 դուրուշի շահ բերող բաւական եկամուտ ունի, որով յառաջադիմութեան շարժման մէջ գտնուած է տեղւոյն դպրոցը. և տեղւոյս բնակչաց մեծ մասին գլխաւոր ապրուստը շերամագործութիւն ըլլալով, թեպէտ ներկայ տարւոյս մէջ անկեալ կերպարանքի մը ենթակայ եղած է, 'ի վերայ այսր ամենայնի մեծաւ մասամբ թէ նիւթապէս և թէ բարոյապէս գովելի վիճակ մը ունին ընդհանրութեան վրայ. այսպիսի

ձախորդ ժամանակի մը մէջ տակաւին ուսումնասիրութեան եռանդը կայ. ուստի իրենց բոլոր ուշադրութիւնը դպրոցին վրայ դարձուցած են.

Նոյն յիշեալ գիւղէն 20 տունի չափ հատուած մը ելած է մէկ ժամ հեռաւորութեամբ լեռան ստորոտը մէկ քանի տարի յառաջ տեղի ունեցած խռովութեան մը պատճառաւ . . . ուր որ կայ մէկ մատուռ մէկ ծերունի քահանայ մը, որ կրսուի այժմ Էշմէ գիւղ։ Յոյները 450 ի չափ ընտանիք են. ունին մի փառաւոր եկեղեցի, քարկիր և դմբեթաւոր, 3 քահանայիք. և բնակիչք 2250 ի չափ կելլան առ հասարակ համեմատական հաշուով և Հայոց նման շերամագործութեան և մանրամասն առևտրոյ կ'զբաղին. ասոնք Հայ-Հոռոմ կ'կոչուին Ակնայ կողմերէն 'ի հնուց դաղթեալ։

ԳՈՒՐՏՊԷԼԷՆ

Մինչդիւղէն երկու ժամ հեռաւորութեամբ բարձր լեռան գագաթան մը վրայ արեւմտեան կողմը բարձրադիրակ գիւղ մի է 600 տունէ բաղկացեալ, որ առ հասարակ 3000 բնակիչ կ'գտնուի համեմատական հաշուով, և կայ եկեղեցի մը նորաշէն յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ մեծ հոյակապ և խաչաձարդ դմբեթաւոր շորս քահանայիք որոց անուանքն են, Տ. Յարութիւն Աւագ քահանայ, Տ. Գրիգոր, Տ. Պետրոս և Տ. Կարապետ. և ունի եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը բոլորովին խեղճ վիճակի մէջ. օրինաւոր հասարակ ընթերցանութիւն անդամ չ'գայ, թեպէտ և

ժողովուրդք հարուստ վիճակի մէջ. կ'դանուին այսինքն արհեստաւոր և շերամագործ են՝ բայց երբէք դպրոցի նկատմամբ դգացում չունին։

ԳՆՃԸԼԱՐ

Գուրտպէլէնէն մէկ ժամ հեռաւորութեամբ արևելեան կողմը 250 տունէ բաղկացեալ բոսի մը մէջ բլուրներով ծածկուած դիւղ մի է. և բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով 1250 կ'հաշուուին. ունին յանուն Ս. Սարգսի կառուցեալ մի փառաւոր եկեղեցի չորս քահանայիւք. որոց անուանքն են Աւագ քահանայ Տ. Յոհաննէս. Տ. Սարգիս. Տ. Կարապետ. և Տ. Թադէոս. ունի եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը որ երկսեռ աշակերտ և աշակերտուհիք կ'դասաւանդուին Զրմաշու ուսումնարանէն ելած հայկազանի մը ձեռօք, և բաւական յառաջադէմ աշակերտ ալ կ'դանուէր թէ քերականութեան և թէ թուագիտութեան մէջ, և ուսանողք աշակերտաց թիւը 200 ի կ'մօտենայ. և ունին հոդաբարձութիւն մը որ դպրոցի վիճակը բարեկարգութեան մէջ կը պահէն միշտ. և ժողովուրդք բաւականի չափ ուսումնասէր են. և արհեստին երկրագործ և շերամագործութիւն է. և յիշեալ գիւղէն մէկ քառորդ հեռաւորութեամբ Ս. Սարգիս անուամբ ուխտատեղի մը ունին ի հնուց մնացեալ, որուն զարմանալի հրաշից պատմութեան տեսարակը քովս է. և յիշեալ Ս. ուխտին եկեղեցւոյ հիմերը հաստատ կերպով մինչև ցարդ կը կենայ Աւագ սեղանի կամարով հետ մէկտեղ, որուն մէջ քարայր մը կար որ հազիւ անձ մը կարող է ներս մտնելու. և յիշեալ քարայրի մէջ ինքնաբուխ պատուական քաղցրահամ ջուր մը կար, և նոյն ջուրին եղերքը խաչաձև երեք հատ ալ արձաններ կանգնած կային. և կ'կարծուի որ այսպիսի հնութիւն մը հազար կամ հազար երկու հարիւր տարուան չափ ըլլայ և Ս. Սարգիսի տօնախմբութեան օրը ամեն տեղայ անթիւ ուխտաւոր կ'յաճախեն եղեր անոր սուրբ ուխտին, յիշեալ գիւղի ժողովուրդք այսպէս կ'վկայեն. և մեծաւ մասամբ աղքատ են, և փոքր մասը միշտ հարուստ։

ՍԱՊԱՆՃԱՑ կամ ՀԵՂԻՆՈՒՊՕԼԻՍ

Գնճըլար գիւղէն 5 ժամ հեռաւորութեամբ դեղեցկադիր մրգենաշատ վայր մի է լճին եղերքը արևելեան կողմ մը. և երեք Աղդերէ բաղկացեալ, Հայ, Յոյն և Տաճիկ. Հայերը 25 տունէ բաղկացեալ առանձին թաղ մը կ'կազմեն, և բնակիչք առ հասարակ 125 կ'հաշուեն. և ունին մի փոքր եկեղեցի յանուն Ս. Մինասայ կառուցեալ մէկ քահանայիւ, Տ. Աստուածատուր անուամբ և եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մը ամենախեղճ վիճակի մէջ գրեթէ գոյուած. ժողովուրդք թէպետ սակաւ ինչ ունին հարստութիւն բայց ծոյլ և միանգամայն դանդաղ և զուրկ բարոյական մասին։

Յոյնք 12 տունէ բաղկացեալ թաղ մը են 25 բնակչով, ունին մի եկեղեցի և ոչ դպրոց. ժողովուրդք աղքատ վիճակի ենթարկուած։

Տաճիկք 1000 տունէ կազմուած առանձին թաղի մը մէջ 3000ընակիչ կելլան. և ըստ բաւականին հարուստ են, հողագործութեան և շերամագործութեան կ'զբաղին, ունին երկու մկիկի և մէկ ալ դպրոց, բայց իրենք յետին ասպիճան խաւարի մէջ, և գիւղին մէջ մէկ քանի ահագին պանդոկներ կան տաճկաց սեփհականեալ. և գիւղի առաջը ահագին լճակ մը կայ, որուն շրջապատը հաղիւ մարդ մը կը կարողանայ 13 ժամէն շրջիլ. և լճին ջուրը քաղցրահամ ըլլալով դիւղացւոց մեծ մասը նոյն ջրով կը բաւականանան. և յիշեալ լճին մէջ կ'գտնուի թէ ժամանակին բաւական մեծամեծ շինութիւններ կայ եղեր. բայց յետոյ ջուրը ծածկեր ու անյայտ ըներ է որ կ'ըսուի այժմ Սապանճայ կէօլիւ։

ԱՍԼԱՆ ՊԷՑ

Սապանճայ քաղաքէն 5 ժամ հեռաւորութեամբ արևելեան հարաւային կողմը գեղեցկադիր բարձր բլրի մը վրայ 300 տունէ բաղկացեալ գիւղ մի է և ընակիչք առ հասարակ 1500ի կհասնի. ունի յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ մի փառաւոր Եկեղեցի 3 Քահանայիք, Տ. Մարտիրոս Աւագ Քահանայ, Տ. Յովակիմ. և Տ. Յովհաննէս, և ունի Եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը Մամիկոնեան անուն, որուն մէջ երկուքեան աշակերտք կ'դաստիարակուին հայկաբանի մը ձեռօք և աշակերտաց թիւն է 200 և որոնց մէջէն քերականութեան և թուադիտութեան՝ պարապող բաւական յառաջադէմ աշակերտք և աշակերտուհիք կելլան, նաև Սրբազան

պատմութիւն և Քրիստոնէական վարդապետութիւն ալ մէկ տեղ կընթեռնուն. և կայ վեց անձերէ բաղկացեալ հոգաբարձութիւն մը որ դպրոցի յառաջադիմութեան պէտքերը կը հոգան. իսկ դպրոցը եկեղեցւոյ եկամուտովը կ'յարատևէ, առանձին իրեն յատկացեալ եկամտից պակասութենէն բայց յոյս կայ որ աւելի ևս յառաջադիմութեան շարժման մէջ ըլլան այսուհետև. և ունին մի թանգարան որ կ'յաճախեն ժողովուրդք երբեմն և ունին սակաւ ինչ փափաք ուսումնասիրութեան. բայց ներկայ տարոյս մէջ անկեալ կերդարանքի ենթակայ եղած ըլլալնուն բաւական պաղած էին դպրոցէն, և իրենց սովորական արհեստներին է շերամագործութիւն, ածխագործութիւն և վաճառականութիւնը, հողագործութիւնը խիստ քիչ յառաջ դացած է բայց ընդարձակածաւալ դաշտեր ունին. որոնք հեղհեղէ մշակուելու վրայ են և յիշեալ գիւղին մէջ շերամի գործարան մը կայ և որուն մէջ յիսունէն աւելի ինքնին չափ հասեալ աղքատ օրիորդք կաշխատին ըստ արժանոյն. օրականներին է 2 կամ 3 դուրուշ. բայց խիստ ցաւալի տեսարան։

ՕՎԱՃԸԽ

Ասլանպէյէն 2 ժամ հեռաւորութեամբ 300 տունէ բաղկացեալ լերան մը ստորոտ գեղեցիկ բլրի մը վրայ արևելեան հարաւային կողմը հաստատուած գիւղ մի է. և ընակիչք առ հասարակ 1500 ի կ'հաշուի համեմատական հաշուով, և ունին յանուն Ս. Լուսաւորչի կառուցեալ Եկեղեցի մի մեծ և փառաւոր

չորս քահանայիւք. որոց անուանքն են, Տ. Կարապետ աւագ քահանայ, Տ. Գրիգոր. Տ. Արիստակէս. և Տ. Վրդանէս և ունի Եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը, որուն վիճակը աղգայնոց աղքատութեան և տառապանաց տակ կ'հեծէ. և երկու սեռից աշակերտաց թիւը ամբողջ 150 ի կը հասնի, որոնց մէջ շատ քիչ կդտնուի հայկաբանութիւն ուսանող աշակերտ. և ունին Հայկաբան դասատու մը որ Արմաշու Ս. Վանուց ուսումնարանէն յառաջ եկած է, բայց դպրոցը իրեն առանձին եկամուտ չունենալուն դիւղացւոց քսակէն կսպասուի որուն յարատևիլը. ուստի խարխուլ վիճակի մէջ է այժմ, թէպէտ Ժողովուրդը աղքատ վիճակի մէջ կդտնուին. բայց և այնպէս յետին աստիճան ծոյլ են. սովորաբար աշխատութիւններին շերամագործութիւն և հողագործութիւն է. միանգամայն ածխագործութիւնն ալ կընեն. վերջապէս թշուառութեան ենթակայ եղած են։

Նաև կայ յիշեալ գիւղին մէջ 6 տուն բողոքական 30 բնակիչով. և ունին ժողովարան մը և մէկ քարոզիչ Առաքել անուամբ. իրենց դպրոցին մէջ դտնուող աշակերտաց համար ուսման և դասախօսութեան կպարապի։

ՏԷՕՆԿԷԼ

Օվանքիսէն կէս ժամ հեռաւորութեամբ լերան մը ստորոտը դաշտային և պարտեզալից դեղեցկադիր փոքրիկ բլրի մը վրայ հաստատուած 40 տունէ բաղկացեալ փոքրիկ գիւղ մի է արևելեան հարաւային կողմը, և բնակիչք առհասարակ 200 ի կհասնի. և ունին յանուն Ս. Սարգսի կառուցեալ Եկեղեցի մը մէկ քահանայիւ Տ. Յակոբ անուամբ և Եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մը. որուն մէջ 30 ի չափ աշակերտ կդաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք. բայց դպրոցը աղքատ գիւղացւոց քսակէն կըսպասուի, և Եկեղեցին օրինաւոր ժամարարի ձեռք մը ղգեստ անդամ չունի վերջապէս խիստ ցաւալի վիճակ և ճշմարիտ Հայոց սրտերուն մեծ ցաւեր կպատճառէ, նաև ունին պղտաբեր երկիրներ. բայց գիւղացւոց ծուլութեան պատճառաւ բոլորովին անմշակ մնացած են։

ՊԱՐՏԻԶԱԿ

Տէօնկէլէն ժամու կէս և Նիկոմիդիայէն նաւակով երկու ժամ հեռաւորութեամբ Կէօյտաղի ըսուած ահագին լերան ստորոտը հիւսիսէն հարաւ ձգուած բարձր բլրակի մը վրայ 1100 տունէ բաղկացեալ գիւղաքաղաք մի է. որ համեմատական հաշուով 6000 բնակիչ կհաշուի առ հասարակ. ունին Ս. Յակոբայ կառուցեալ փառաւոր Եկեղեցի չորս քահանայիւք. որոց անուանքն են. աւագ քահանայ Տ. Գրիգոր. Տ. Մկրտիչ. Տ. Դաւիթ. և Տ. Կարապետ. Տ. Յովհաննէս և Եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մը երկսեռ. և արական սեռի դպրոցի մէջ 400 տղայի չափ կդաստիարակուի, որոնց մէջէն 40 տղայի չափ քերականութիւն, թուագիտութիւն, գաղղիերէն և Տաճկերէն կուսանին Շիրինեան մականուանեալ Ղարահիսարցի Գեորք պատուելի կա-

տարեալ Հայկարանի մը ձեռօք, այսինքն առանձին կարգի ազայք քերականութիւնին առարատած դրաբառէ աշխարհաբառ թարգմանութիւններ կնեն միանգամայն շարադրութիւն կգրեն, նաև թուադիտութիւնն ալ մէկ տեղ. գաղղիերէն և Ցաճկերէնն ալ բաւական յառաջացուցած են. երկրորդ կարգի ազայք ութը մասունք բանին առարատած համաձայնութեան մէջ բաւական յառաջադէմ են, բայց գաղղիերէն և Ցաճիերէնին այնչափ չէ, երրորդ կարգինները միանակ ութը մասունք բանիի մէջ են. նաև Սրբազան պատմութիւն և Քրիստոնէական վարդապետութիւն ալ դաս կառնուն, և ունին դպրոցի յատկացեալ թանգարան մը որուն ընթացքը կաղնի կաղն է. և յիշեալ դպրոցը ունի 30000 ղուրուշի մօտ կալուածներ որուն տարեկան շահովը կյարատևէ միանակ արական սեռի դպրոցը. բայց իգական սեռի դպրոցը բոլորովին խեղճ. գրեթէ գոցուած կհամարուի, տեղւոյն ժողովրդեան անհոգութեան պատճառաւ թէպէտ յիշեալ պատուելին գիւղին երևելիներուն շատ անգամ բողոքած է բայց որուն ինչուն պէտք ձայնը լսող չիկայ, նաև նոյն լեղուադետ Հայկարանին գոհացուցիչ ամսական մը չվճարելնուն. որ ևս արժանաւոր ալ է գարձեալ մէկ կողմէն դպրոցի յառաջադիմութեան համար կաշխատի. և միւս կողմէն ալ իրեն ընտանիքը կառավարելու համար հողագործութեան ալ կպարապի երբեմն. թէպէտ և ժողովուրդք հեռաբրքիռեն. բայց սկզբունք երբէք ոչ ունին. ուստի ծոյլ անհոգ և անզգայ և միանգամայն բարոյապէս մեռեալ. որովհետև ճշմարիտ ազգասէրի մը համար մահ

է յիշեալ գիւղացւոց այս անշարժութիւնը։ Յիշեալ գիւղաքաղաքէն կէս ժամ հեռու յանուն Ս. Մինասայ ուխտատեղի մը կայ աւանդութեամբ. որ երբեմն երբեմն ժողովուրդք աղօթելու կյաճախեն. բայց որուն պատմութիւնը մեզ անծանօթ է։ Բողոքականք 50 տունէ բաղկացեալ առանձին թաղ մը կը կազմեն 250 բնակիչով, ունին ժողովարան մը դպրոցով և մէկ քարոզիչ և այս բողոքականութիւնը յիշեալ գիւղաքաղաքի մէջ 20 տարիի չափ կայ որ հաստատուած է բայց իրենց թիւէն աւելցած չունին։

Նաև 40 տունի չափ ալ պապական կգտնուի. որոնց թիւը առհասարակ 200 ի կհասնի համեմատական հաշուով և այս պապականութիւնը 6 տարիէ որ հաստատուեր է. ունին մի եկեղեցի իրեն յատկացեալ դպրոցով, բայց թէ պապականք և թէ բողոքականք խիստ ադքատ վիճակի ենթարկուած են։

Նիկոմիդիոյ վիճակին երկրորդ մասի Եալովայ ըստ-
նահանգին մէջ գտնուող Հայոց գիւղերը։

ՇԱԽՇԱԽ

Շախշախ գիւղը որ շրջենաւով Պօլիսէն և թէ Նիկոմիդիայէն 3 ժամ ու կէս հեռաւորութեամբ հիւսիսէն հարաւ ձգուած Ցառճայի դէմ ծովու եզերքէն մէկ քառորդ վերը փոքրիկ բլրակի մը վրայ հաստատուած 80 տունէ բաղկացեալ ծովահայեաց գիւղ մի է. և ընակիչք առհասարակ Համեմատական հաշուով 450 ի կհասնի և ունի մի փոքրիկ Եկեղեցի՝ յանուն Ս. Նիկողայոսի կառուցեալ մէկ քահանայիւ Տ. Նիկողայոս անուամբ. և Եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը ունի որուն մէջ 30 ի չափ երկսեռ աշակերտ և աշակերտուհի կը դաստիարակուին Արմաշու ուսումնարանէն ելած Հայկաբանի մը ձեռօք, բայց յիշեալ դպրոցը ժողովրդոց քսակէն ապասուելուն անբարեկարգ վիճակի մէջ կգտնուէր թէպէտ յիշեալ Եկեղեցին ժողովրդոց վրայ 'ի վաղուց կորուսեալ 30,000 դուրուշի մօտ դրամ ունէր նոյն դրամները դժուարութեամբ հաւաքուելով յանձնուեցաւ վեց անձերէ բաղկացեալ հոգաբարձուաց որ յիշեալ դպրոցին կալուած մը առնուելով բարեկարգուի դպրոցի ապագայ վիճակը. և ժողովուրդք ընդհանրապէս հոգաւորք և շերամագործ են նաև մեծաւ մասամբ հարուստ և ազքատք սակաւաթիւ. բայց իրենց հարստութիւններն միշտ 'ի զուր կվատնեն։

ԽԷԼԷԾ ԳԻՒՂ.

Այս գիւղը Շախշախէն մի ժամ հեռաւորութեամբ և ծովու եզերքէն երկու ժամ ներս արևմտեան հարաւային կողմը փոքրիկ բլրի մը վրայ հաստատուած 100 տունէ բաղկացեալ գիւղ մի է. և ընակիչ առհասարակ համեմատական հաշուով 500 ի կհասնի. և ունին մի փոքրիկ քարուկիր գեղեցիկ Եկեղեցի յանուն Ս. Սարգսի կառուցեալ մէկ քահանայիւ Տ. Կարապետ անուամբ. նաև Եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը ունի խարխուլ վիճակի մէջ, բայց յոյս կայ որ նորոգուի. և որուն մէջ 35 աշակերտ կդաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք. բայց յիշեալ Եկեղեցին ժողովրդոց վրայ 'ի վաղուց ճնացեալ տոկոսով 11,267 դուրուշ դրամ ունենալով. հաւաքուեցաւ և դպրոցին յատկացուելով չորս անձերէ բաղկացեալ Հոգաբարձուաց հսկողութեան ներքև յանձնուեցաւ. որ յիշեալ հոգաբարձուք նոյն դրամով դպրոցի հաստատ կալուած մը առնեն. որ նոյն կալուածոց գոյացած շահովը յառաջանայ դպրոցը և արդիւնք յառաջ գայ։ Եւ ժողովուրդք երկրագործ և շերամագործ են. և հարստութիւններն միջակ է. թէպէտ և աշխատող են արք և կանայք. բայց շռայլութեամբ ի զուր կվատնեն իրենց խաւարին ազխութենէն։

ԶՈՒԽՈՒՐ ԳԻՒՂ.

Խրլբճ գիւղէն մէկ ժամ հեռաւորութեամբ արևմտեան հարաֆային կողմը ծովեղերքէն 3 ժամ ներս ցորերու մէջ 48 տունէ բաղկացեալ փոքրիկ գիւղ մի է և բնակիչք առ հասարակ 240ի կհասնի համեմատական հաշուով. և ունին յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ փոքրիկ Եկեղեցի մը մէկ Քահանայիւ Տ. Մարտիրոս անուամբ։ Բայց յիշեալ Քահանային վրայ ծանր ամբաստանութիւններ կընէին ժողովուրդք. իրաւի քննեցի որ ստոյգ է բրած ամբաստանութիւնին որովհետև փոխանակ խաղաղութիւն սերմանելու. միշտ խռովութեան տեղիք կուտայ և իրեն չար կիրքերէն փորփոքած ի պատիժ ժողովրդոց եկեղեցւոյ դուռը օրերով դոց կպահէ եղեր ևն ևն. և եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մը որուն մէջ 30ի չափ աշակերտ կդաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք. բայց անբարեկարգ վիճակի մէջ զուրկ ուսմունքէ. և յիշեալ Եկեղեցին ժողովրդոց վրայ բաւական տարիներէ ի վեր 20,134 ղշ մնացած դրամ ունէր նոյն դրամը դժուարութեամբ յաւաքելով յատկացուցինք դպրոցին և միանգամայն չորս անձերէ բաղկացեալ Հոգաբարձուած. որ կալված մը առնուի և նոյն կալուածի շահով դպրոցի բարեկարգութիւնը յարատևէ. և ժողովուրդք երկրագործութեան և շեռամագործութեան կպարապին միշտ. թէպէտ կաշխատին անխնայ կերպով. բայց շռայլութեամբ զեխութեամբ ի դուր կվատնեն։

ՔԱՐՅԻ ԳԻՒՂ.

Զուխուր գիւղէն մի ժամ հեռաւորութեամբ արևմտեան հարաֆային կողմը և ծովու եղերքէն 4 ժամ ներս բոլոր շրջապատը բարձր բլուրներով պատած խորդուբորդ ձորերու մէջ 150 տունէ բաղկացեալ գիւղ մի է. որ ըստ Տաճկաց Լալէ տէրէ կկոչուի, և բնակչաց թիւը առ հասարակ 800ի կհասնի համեմատական հաշուով, բայց յիշեալ գիւղի դեռիններրը միշտ շարժման մէջ ըլլալուն. որոնց վրայ բնակող ժողովուրդք իրենց բնակարաններնուն մէջ միշտ ահով թողով կանցունեն իրենց կեանքերնին. մանաւանդ որ ձմերային եղանակ մեծամեծ վտանգներու ենթակայ կըլլան. և ունին Եկեղեցի մի փառաւոր յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ երկու Քահանայիւք, Տ. Ներսէս. և. Տ. Յովհաննէս անուամբ որ սոյն Քահանային մոլի վարքը ժողովրդոց դայթակղութեան պատճառներ տեղի կուտայ. և ունին դպրոց մը թէպէտ անբարեկարգ վիճակի մէջ, այսինքն հասարակ դասատուանդամ չի դար. և յիշեալ անբարեկարգ դպրոցին դարման մը ըլլալու համար Եկեղեցին ժողովրդոց վրայ տոկոսով 10438 ղշ դրամ ունէր ի կորուստ համարուած. նոյն ստակը դժուարութեամբ հաւաքելով յատկացուցինք դպրոցին և միանգամայն չորս անձերէ բաղկացեալ Հոգաբարձուած հսկողութեան ներքև յանձնելով որ դպրոցին կալուածմը առնելելով որուն տարեկան շահովը դպրոցի պէտք եղած յառաջադիմութեան պակասութիւն-

ները հոգացուի. բարոյապէս և ժողովուրդք ընդ-
հանրապէս հողագործ և շերամագործ են միայնդա-
մայն աղքատ. որ ճշմարիտ հայու սրտի դիմանալու
բան չէ մնաւանդ անօգնական և անայցելու Ցեա-
լոցին անտարակոյս օր Ցեալ ոչխարազգեստ գայլե-
րուն ճիրանը պիտի անցնի ուր միշտ որսալու կհետևին
յաճախելով գիւղօրէից մէջ։

ՉԷՆԿԻԼԷՐ

Քարցի գիւղէն երկու ժամու չափ հեռաւորու-
թեամբ, և Նիկոմիդիոյ Ծովուն և Նիկիոյ լճակին
մէջ տեղը արևելեան հարաֆային կողմը 500 տունէ
բաղկացեալ գիւղ մի է. և բնակչաց թիւը առ հասա-
րակ համեմատական հաշուով 2500ի կ'հասնի. և ունին
եկեղեցի մի խարխուլ վիճակի մէջ. հինգ քահանա-
յիւք որոնց անուանքն են Տ. Արսեն. աւագ քհնյ.
Տ. Կարապետ ուսումնական Տ. Մինաս. Տ. Գօղոս
և Տ. Յօհաննէս. և եկեղեցին իրեն յատկացեալ
ունէր արական սեռի դպրոց մը միայն, որուն մէջ 300
աշակերտ կդասաւորակուէին հասարակ համա-
ռատուի մը ձեռօք, բայց զուրկ ուսմունքէ. նաև
դժբաղդաբար իգական սեռի դպրոց չունենալուն
խիստ ցաւ ղգացի. ուստի յետոյ բացինք ամենէն
դժուարութեամբ ուր 250ի չափ աշակերտուհիք կը
դասուիարակուին որուն մէջ այժմ հասարակ ըն-
թերցանութեամբ, և յիշեալ եկեղեցին տարեկան
12,000 ղուրուշի չահ բերող կալուածներ ունե-
նալով յատկացուցինք յիշեալ երկսեռ դպրոցած՝
որ վեց անձերէ բաղկացեալ նորընտիր Հոգաբար-

ձուած հսկողութեամբ յարատևէ երկսեռ վարժա-
րանաց բարեկարգութիւնը, նաև բաց ի յիշեալ
եկեղեցւոյ եկամուտներէն. ժողովրդոց վրայ եկե-
[կեղեցին կրկին 10,000 ղշի դրամ ունենալով հաւա-
քեցինք. և վերոյիշեալ դումարին հետ միացուցինք
նաև չորս անձ բաղդքական կայ. որ ունին քարոզիչ
և միանդամայն բարեկարգեալ դպրոց մը. որ սկը-
սեր են լուսաւորչական հայերը իրենց տղաքնին
նոյն դպրոցը խաւրել. քանի որ տեղւոյն լուսաւոր-
չական դպրոցները անբարեկարգ վիճակի ենթար-
կուած են այժմ ուստի խիստ ցաւ և մեծ ամոթ,
և ժողովուրդք ոմանք երկրագործ ոմանք շերա-
մագործ և ոմանք արհեստաւոր, և մեծաւ մասամբ
հարուստ. բայց ընդհանրապէս խաւարին բանտի
մէջ կթէգերին. ուստի տեսակ տեսակ գեշ հետե-
ւութիւններ պակաս չեն միշտ. պէտք է որ ժողո-
վրդոց բարոյական դարմանները ինչ է նէ հոգացուի
անցապաղ։

ՄԵԾ ՆՈՐ ԳԻՒՂ ԲԱԶԱՐՈՒ

Մեծ նոր գիւղ Չէնկիլէրէն կէս ժամ հեռաւո-
րութեամբ բազմամարդ գիւղ մի է. այս գիւղը
Նիկոմիդայի Ծովէն չորս ժամ ներս, և Նիկիոյ
լճակին մէկ ժամ մօտ արևելեան հարաֆային կողմը
800 տունէ բաղկացեալ գիւղաքաղաք մի է, և
բնակչաց թիւը առ հասարակ համեմատական հաշ-
ուով 4,000էն աւելի կելլայ և ունի իր մէջ յանուն
Ս. Կարապետի կառուցեալ մի փառաւոր եկեղեցի
հինգ Քահանայիւք որոց անուանքն են Աւագ Քա-

հանայ Տ. Պօղոս. Տ. Կարապետ. Տ. Ստեփան Տ. Սիմոն և ուսումնական Տ. Գրիգոր որ Արմաշու ուսումնարանի աշակերտաց մինն է. և Եկեղեցին իրեն ունեցած եկամուտը դրեթէ 12,000 ղրշ չափ կելլէ, որ դպրոցած յատկացուած է, և ունի մի փառաւոր առաջնորդարան երեք սենեկաւ երկսեռ վարժարաններով հետ մէկ տեղ. որուն մէջի դասատուն Արմաշացի Յովհաննէս Մալեան բաղմարդիւն և հռչակաւոր պատուելին է. և որուն աշակերտաց թիւը 40ի չափ կհասնի. քսան մ'ալ ընտրուած կան մօտ օրերս ուսումնարանն ընդունելու, Աշակերտները երեք կարգի բաժնուած են. առաջին կարգի աշակերտք դերականութիւնին աւարտած թարգմանութիւններ և դրաբառ շարադրութիւններ գրելու կարողութիւն ունին. նաև թուաբանութիւն ալ, և մարտի սկզբէն տաճկերէն ալ պիտի սկսեն. երկրորդ կարգինները ութը մասունք բանին աւարտած համաձայնութեան մէջ են, երրորդ կարգիններն ալ ութը մասանց մէջ են. որուն հետ կուսանին նախ Աղգային և Սրբազան պատմութիւն ունի մէկ ծաղկոց, որուն մէջ 210ի չափ աշակերտ կդաստիարակուին և ունին Հոդաբարձու 6 անձերէ բաղկացեալ. որոնք արական սեռի դպրոցին հոգը կտանին ամենայն ջանիւք. և իգական սեռի դպրոցն ալ ունի 200ի չափ աշակերտ սանուհիք. որոնց դաստիարակները 13 անձերէ բաղկացեալ ինամակալութեաց ընկերութիւնն է. և աշակերտուհիք կպարապին քերականութեան. Քրիստոնէական վարդապետութեան և Աղգային պատմութեան եայլն. բացի ասոնցմէ Անձնուէր ընկերու-

թիւն մ'ալ հաստատուած կայ՝ որ ամեն կիրակի առաւօտ հասակաւոր մարդիկ դպրոց յաճախելով ընթերցանութեան կպարապին, նաև Աբարտաեան անունով ընկերութիւն մ'ալ կայ. որուն նպատակը անձնուեր ընկերութեան յառաջադիմութիւնն է. և ժողովուրդոց արհեստն է հոգադարձութիւն. բաւական թիթենիներ ձիթենիներ և այգիներ ունին որոնցմով շատ աղէկ երջանիկ են. և մանաւանդ մեծ հարստութեան աղբիւր մ'ալ հաշիշ սերմանելու պարապելնին է. ըստ նիւթականին այսպէս. բայց ըստ բարոյականին մեծագոյն մասը ոգէտ. և զուրկ բարոյականութենէ.

Ցիշեալ գիւղին մէջ կայ 30 տան չափ Ցաճիկ խառն ընդ Հայս և ունին իրենց համար փոքրիկ մզկիթ մը. և բնակչաց թիւն է առ հասարակ 270 և հարստութիւننին միջակ է և բոլոր հայոց հետ սիրով կապրին.

ՄԻՋԱԳԻՒՂ ԲԱՋԱՐՈՒ

Զէնկիլէրէն մէկ քառորդ հեռաւորութեամբ արևելեան հարաւային կողմը Ասքանիս, այսինքն Նիկիոյ լճակին մօտ հաստատուած 350 տունէ բաղկացեալ գիւղ մի է. որուն բնակիչք առ հասարակ 1800էն աւելի կհաշուին. և ունին Եկեղեցի մի փառաւոր յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ երեք քահանայիւք, որոնց անուանքն են Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Տ. Կարապետ և Տ. Բարսեղ և Եկեղեցին ունի իրեն յատկացեալ արական և իգական սեռի անբարեկարգ դպրոցներ. և արա-

կան սեռի դպրոցի աշակերտաց թիւը 150ի կհասնի՝ որ ընդ. ամենը հասարակ ընթերցանութեան կպարապին. և միևնոյն ատիճանի մէջ է իգական սեռի դպրոցը որ 40 աշակերտուհիներէ կբաղկանայ. և ունին Հոգաբարձութիւն մը չորս անձերէ բաղկացեալ որ երկսեռ վարժարանաց յառաջադիմութեան պէտքերը կհոգան Եկեղեցւոյ ունեցած եկամտից 1500 ղ. տարեկան շահովը, և յիշեալ վարժարանները Եկեղեցւոյ եկամուտով կյարատևեն առանձին իրենց յատկացեալ եկամտից պակասութենէն. և ժողովուրդք մեծաւ մասամբ տգէտ աղքատ և շուայլ են. և միանգամայն զուրկ բարոյական դաստիարակութենէ՝ ոմանք արհեստաւոր ոմանք հողագործ ոմանք շերամապործ և հաշիշ կսերմանեն. և սակաւ են ձիթենի ունեցող. և յիշեալ գիւղի քամակը դորու անուամբ լեռ մը կայ գիւղին կից. որ ամեն տարի մեծ ջնասներ կհասցունէ ժողովրդոց և մինչ ցարդ ալ հասցընելու վրայ է. ինչպէս մենք ականատես ըլլալով կվկայեմք. որ նոյն գիւղի ժողովուրդք միշտ վտանգի տակ են. եկած միւհենտիսն ալ այսպէս վկայեց, Ցաճիկք 12 տունէ բաղկացեալ առանձին թաղ մը կկազմեն. և բնակչաց թիւը առ հասարակ 60ի կհասնի. և ունին քայքայեալ մզկիթ մը որուն մինարէն թթենի է. և հողագործ են ընդ հանրապէս. բայց բոլորովին աղքատ. և Հայոց հետ սիրով կապրին։

ՓԱՋԱՐՈՒ ՔԷՐԻՄԼԷԹ

Մեծ Նոր գիւղէն երկու ժամ հեռաւորութեամբ արևելեան հարաֆային կողմը հաստատուած լեռան

մը ստորոտը փոքրիկ գիւղ մի է 80 տան չափ և համեմատական հաշուով 400ի չափ ժողովուրդ ունի. փոքր մասը հարուստ և մեծաւ մասամբ աղքատիկ դիտեն ընդհանրապէս երկրագործութիւն և շերամագործութիւն. նաև յանուն Ս. Մինասայ կառուցեալ Եկեղեցի մի ունին փառաւոր երկու քահանայիւք Աւետ Տ. Անդրէաս. և Տ. Դաբրիէլ. և երկու սեռին դաստիարակութեանը համար վարժարանի մը ձեռնարկած են. բայց կիսկատար. և անբարեկարգ. իսկ նորընտիր չորս Հոգաբարձուայ օգնութեամբ յոյս կայ բարեկարգուելու, վանավարժ դասատուի մը ձեռօք կմատակարարուի հեռագրեստ. քերականութիւն. թուագիտութիւն. Սրբազան պատմութիւն. Ազգային պատմութիւն և Երաժշտութիւն 40ի չափ տղայոց և 30ի չափ օրիորդաց. և այս գիւղը Նիկիոյ լճի եղերքէն 2 քառորդ հեռաւորութեամբ բաւական պարարտ դաշտ մը կկազմէ. ձիթենալից, և ուր պատուական Զխտխոտ կնշմարուի. Ցաճիկք 10 տունէ բաղկացեալ առանձին թաղ մը կկազմեն և բնակչաց թիւն է 40 առ հասարակ համեմատական հաշուով Հայախառն. և անառակ խիստ և ատելութեամբ կապրին Հայոց հետ. Հայերն ալ տգիտութեան խաւարին բանտին մէջ կթարթափին. և Ասքանիս Նիկիական ըսուած լճին շրջապատը 24 ժամ կտեւէ. ուր իւր ծոցով ժամանակին գիւղեր և քաղաքներ կենալը կկարծուի. խիստ բարեհամ է ջուրը և տեսակ տեսակ ձուկներ կգտնուին հոն. և իւր մէկ քանի ոտքերով Մարմարինա ծովածոցը կհոսէ իւր ջինջ ալիքները. և յիշեալ գիւղը 3 կամ 4 տաճկայ

գիւղէ է շրջապատուած միշտ նախասենք և հաղա-
ծանքներ կկրեն խիստ շատ տաճկաց ձեռօք. ինչ-
պէս վերտրվար 6 թուով անոր անտանելին տեսանք
և կէս քառորդ հեռի ունի ծծմբային ինքնարուխ
հանք մը որուն աղդու բորձը օգտակար է։

ՆԱԼԱԽ ՏԷՐԷ

Քէրեմէթ գիւղէն չորս ժամ հեռաւորութեամբ
անցուդարց ճանապարհի վրայ արևելեան հարա-
ֆային կողմը բլուրներով պատած թթենաշատ և
դաշտային գիւղ մի է 100 տունէ բաղկացեալ. և
բնակիչք առ հասարակ համեմատական հաշուով
500ի կհասնին. և ունի իր մէջ յանուն Ս. Հրեշտա-
կապետի Եկեղեցի մի փառաւոր փոքրիկ երկու
քահանայիւք Ս. Գաբրիէլ Աւագ քահանայ. և Ս.
Միքայէլ անուամբ. և յիշեալ Եկեղեցին ունի իրեն
յատկացեալ դպրոց մը որուն մէջ 80ի չափ երկսեռ
աշակերտք կդաստիարակուին հասարակ համարա-
տուի մը ձեռօք, բայց ողորմելի վիճակ. և Եկեղե-
ցին ունի տարեկան շահ բերող 1500 դրի կալուածներ
որ դպրոցին յատկացուեցաւ չորս անձերէ բաղ-
կացեալ Հոգաբարձուաց ձեռամբ որ յիշեալ դպ-
րոցի յառաջադիմութեան դէպքերը հոգացուի
բարոյապէս նաև Եկեղեցին 26,000 դրի չափ դրամ
ունէր. դարձեալ և այս դրամը ուղեցի իմանալ թէ
որու քով է. վասն զի ի կորուստ համարուած էր.
և յիշեալ գիւղը Տաճկասէր և Ցունասէր բռնաւոր
իշխան մը կար Մ. Ցարութիւն անուամբ որ Տաճ-
կաց կառավարութեան անդամ ալ է, և գիւղի մի-

ամիտ հասարակութիւնը իր ճիրաններուն մէջն
առած իրեն անձնական շահուն համար զոհ բրած
է տեսակ տեսակ անդթութիւններով. երբ որ
յիշեալ ստակին վրայօք քննութիւն ընել սկսեցի.
նոյն բռնաւոր անձը իրեն հետևորդ միութիւնով
մէր բերան եղած առաջին անդամ մենք չկրնանք
ըսելով ուրացան, և կուզէին անյայտ ընել մէջնէ.
բայց և յետոյ ուրիշ տեսակ հնարքով յայտնուեցաւ
և այն ուրացող անձերը սկսեցին խոստովանիլ
26,000 դրը. որ բաւական տարիներէ ի վեր առանց
շահի կկենայ եղեր իրենց վրայ այն աղքատ ժողո-
վրդոց իրաւունքը. ահաւասիկ այսպիսի անդութ
բռնաւոր հայերուն ձեռքերումն է որ բոլոր գիւղերը
տգիտութեան խաւարին մէջ մնացած է. և ժողո-
վուրդք կղարաալին երկրագործութեան և շերամա-
դործութեան. և ոմանք ալ հաշիշ կոերմանեն։

ՄԷՐՏԻԿԷՕՁ

Եալախտէրէյէն մէկ քառորդ հեռաւորութեամբ
արևելեան հարաֆային կողմը փոսի մը հատատա-
ուած 100 տունէ բաղկացեալ փոքրիկ գիւղ մի է,
և բնակիչք առ հասարակ 500էն աւելի կելլայ,
և Նիկկոյ լճէն 6 ժամու շափ հեռու և Նիկոմիդիոյ
ծովու եղերքը հատատուած Գարամուսալ անուամբ
գիւղաքաղաքին 2 ժամ ու կէսի չափ մօտ է. և
յիշեալ գիւղի մէջ կայ յանուն Ս. Կարապետի կա-
ռուցեալ փառաւոր փոքրիկ Եկեղեցի մի երկու քա-
հանայիւք. որք են Ս. Կարապետ Աւագ քահանայ
և որուն վրայ ծանր ամբաստանութիւններ կելլայ

միշտ, և միւոը Ֆ. վրդանէս. և Եկեղեցին ունի իրեն յատկացեալ դպրոց մը. որ 50ի չափ երկսեռ աշակերտք կդաստիարակուին հասարակ համարատուի ձեռօք. բայց ամենախեղճ վիճակի մէջ և ողորմելի տեսարան. և ժողովրդոց մեծ մասը աղքատ են և սակաւ կդանուին միջակ հարուստ. բացի յիշեալ Ֆ. Կարապէտ Քահանայէն. որ նա մէկ հատիկ է հարստութեան կողմանէ. որ դիւղացւոց վրայ տոկոսով ստակ բաժնած իւր դաղանի մեքենաներով բոլոր ժողովրդոց սիրտը իրեն դրաւած է և տեսակ տեսակ բռնութիւններ բանեցընելով յիշեալ դիւղի դպրոցի տղայոց ուսմունքէ զրկուելնուն արդելքներ կըլլայ. որ միշտ ինքը մինակ բանիբուն յիշուի, միամիտ դիւղացւոց առաջը և բաւական տարի միթէվէլլութեան պաշտօն վարելով մինչ ցարդ Եկեղեցւոյ տեսակները իր քովը պահած և 26,000 դրչ չափ Եկեղեցիին ունեցած դրամը չի դիտցուիր թէ ինչ եղած է. և որու քով է և դիւղի բնակիչներէն թէ այրի կին, և թէ հասակաւոր օրիորդներ իրենց աղքատութեան պատճառաւ երբեմն յիշեալ դիւղէն 2 ժամ ու կէս հեռաւորութեամբ Գարամուսալ ըսուած դիւղը երթալով տաճկաց տուներուն մէջ ոպասուորութիւն կընեն. որ տեսակ տեսակ դէշութիւններ ալ երբեմն տեղի ունեցեր է. ինչպէս որ անձեալները պատահմամբ կնոջ մէկը մահմետական կրօնքը ընդուներ է. նաև ժողովուրդք հաղադրութեան և շերամադրութեան կ'պարապին ոմանք ալ՝ ածխադործ են բայց իրենց մեծ հարստութիւնը մի քանի վաճառութիւն է։

Նաև յիշեալ դիւղի մէջ 12 տունէ բաղկացեալ Ֆաճիկ կան որ առանձին թաղ մը կ'կազմեն 60 բընակիչով. բայց վիճակնին խիստ աղքատ և հայոց հետ սիրով կապրին. և ունին փոքրիկ մկկիթ մը որուն մինարէն վայտաշէն է։

Եալովայի նահանգին հայաբնակ դիւղերէից
հարանեաց նկարագրութիւնը

ՆՇԱՆՏՈՒՔ ԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Ծնողք երբոր կնային որ իրենց արու զաւակը չափահաս եղած է, կսկսին ասդին անդին հարցուփորձ ընել հարսնեցու մը որոշելու համար, այս կէտը առաջին անդամ մօրը կողմանէ կսկսի. երբոր տեղեկութիւն մը կստանայ թէ այս ինչը ութը կամ տասը տարեկան օրիորդիկ մը ունի (օրիորդիկ մը) ըսի վասն դի այս տհաս հասակին մէջ դտնուող անհատը ընդհանրապէս օրիորդիկ կամ մանկիկ կ'կոչուի և ոչ թէ օրիորդ կամ պատանի խսկոյն իւր մեծին այսինքն տղուն հօր խնայ կուտայ, և անմիջապէս բանակցութիւն մին է կսկսի երկու կողման մէջ. քանի քանի իրիկուններ կերթան օրիորդիկին հօրը տունը և սակարկութիւն կ'ըլլայ. տղին հօրը ստացուած քին կամ փայլուն մետաղներուն սիրահարութեամբը, և ոչ տղուն խոհեմ և պարկեշտ ըլլալուն. հետևեալ օրը երկու կողմէն կերթան Եկեղեցւոյ

սենեակը և անտեղ ինքերկայութիւն քահանայից և աթոռակալին Նշանաւութեան հանդէսը կկատարուի օրիորդիկին կողմանէ, երկու կամ երեք կանդուն «խումաշ», և ապին կողմէն լաթ մը և լաթին ծայրը մատանի մը կապուած, շնորհիւ դաւաթոց օղիին, այն տեղի հանդէսը կ'լմննայ ; դանք հիմա տղուն հօրը տունը նոյն գիշերին կսկսին գալ և աչքի լոյս ըսել. հետզհետէ կսկսի բազմութիւնը խունել, մէջ տեղը մեծկակ լաթ մըն է կփռուի. մէկ կողմէն պատրաստուած կերակուրները կբերուին. անոր կյաջորդէ գինիին շիշը, և բաւական խմուելէն վերջը գլուխները կսկսին տաքնալ և մաքառումնէ կյաջորդէ այս տաքութեան մէջ. որը եանուադարան կուզեմ որը չէ թմբուկ կուզեմ էն վերջապէս երեսնց գիտաւորութեան մէջ կյաջողին և պահեցալ ատենցմով զուարճանալէն և բազոսին պատկերին առաջը բաւական երկրպագելէն վերջը առաւօտեան ժամը տասնին կամ տասնեմէկին կը ցրուին. այս դէպքը տասը կամ տասնեերկու օր շարունակ տեղի կունենայ, և անոր կյաջորդէ «խնամութիւն ըսվածը» ապին հօրը կողմէն միւնոտիկ մը կարձակուի որ երթայ իրենց ազգականներուն բարեկամներուն և . . . ցան ընէ, թէ այս իրիկուն հարսնեցուն տեսնալ պիտի երթանք հրամայեցէք ներկայ գտնուելու, ասանկով քսան կամ քսանհինգ անուր կգումարէ հետերին ունենալով կէս ոչխար, և քանի մի հատ ալ խոշոր «թավա չէօրէքներ» արամբ և կանամբ խուռն բազմութեամբ կդիմեն օրիորդիկին հօրը տունը. և անիկայ ալ արդէն վերոյիշեալին հաւասար կամ առաւել

բազմութիւն խառնած է իրեն տունը, ահա երկու կողմէն եղած քառասուն կամ յիսուն անվոր, հանդերձ ընտանեօք, և բաւական ուտելէն և խմելէն վերջը «որ Բաբիլոնի Աշտարակէն տարբերութիւն չունի» օրիորդիկը մէկի մը առաջնորդութեամբ օրթան կուգայ, և կսկսի ձեռք համբուրելու հանդէսը տեղի ունենալ որ այն ժամանակը կ'սկսին ամեն մէկը իրենց կարողութեան վրայ նայելով հարիւր երկու հարիւր յիսուն կամ քիչ մը աւել պակաս հարսնեցուին պարգևներ շնորհել. և անկից վերջը բաւական ժամանակ խըմելէն և նուագածուներու շատ մը ստակ վատնելէն վերջը առաւօտեան կսկսին ցրուիլ, և յիշատակ թողլով ըրած ամեն մէկ խայտառակութիւններն։ Գանք որ հարկ պիտի ըլլայ օրիորդիկին ծնողացը իր փեսայացուն տեսնելու երթալ, որ ճիշդ առաջուան պէս բազմութեամբ, և կէս ոչխար, և չէօրէկներ, և ասիկայ տեղի կունենայ մէկ շաբաթին, կ'երթան խուռն բազմութեամբ տղուն հօրը տունը կլմնան, և շատ մը դեղեցութիւններ շուայլութիւններ տեսարանին մէջ կներկայանան, արբեցութեանց չափը չկայ, քիչ մը վերջը փեսայացուն կներկայանայ տեսարանին մէջ, և ճիշդ վերոյիշեալին պէս ձեռք համբուրելու հանդէսը կսկսի, և երբոր առանց կողմէն կանանց կողմը կանցնի կանայք կսկսին խումաշներ տալ տղուն. որը մէկ թօփ որը կէս, որը հինգ արշին որը չորս, և այս վերջերը խումաշն ալ բաւական չհամարելով, սկսան «չուխայ» տալ, չեմ դիտեր ասոր կամ վաղը ինչեր պիտի հանեն երևան այս ձեռք համբուրելը քանի մը անգամ տեղի կու-

նենայ կանանց կողմը որ հետերնին ունեցած, շաբարեղէն ևն բաներ առատ առատ փեսայացուին կշնորհեն, ապին կնիկմարդեր այս տեսարանովը կզբաղին, յաղթանակ ունենալով մէջ տեղը փեսան, անդին երիկմարդիկներ դինւոյ դաւաթը յաճախ յաճախ պարպելով կշարունակեն իրենց հանդէսը, և բաւական ժամանակ նստելէն վերջը արբեալ քթերնին բերանին կորանցուցած վերջ կուտան հանդիսին։

Այս խնամութիւն ըսածը տեղի կունենայ երբեմն երբեմն, բայց առաջինին չափ ծանր չըլլար. և տարի մի և կամ երկու տեւելէն վերջը կյաջորդէ, տանըշը։ Ցանըշը հարսանիքէն երկու շաբաթ առաջ կկատարուի, տղուն հօրը կողմէն տասը տունուորիչափ կհամարուին, և իրիկունը վերոյիշեալին պէս կելլան օրիորդիկին հօրը տունը կերթան, և նորին կողմէն ալ յիշեալ թուով մարդիկներ ժողվված են, հոն երկու կողման շատ մը այլանդակ զուարճութիւններ ըլլալէն վերջը, Օրիորդիկին սակարկութեան խօսքը կբացուի, և երկու կողման բարեխօսներու շնորհիւ մէկ կամ երկու ճերմակ մէճիտով կլմնայ. և հանդիսականք կցրուին, Յետոյ ալ առաւօտ կանուխ բաւական կիներ կժողվին, և քանի մի այլանդակ խաղեր դրուցելէն վերջը ճերմակեղէն մը կձգեն օրիորդիկին վրայ և կ'սկսի տնէ խառն պտտիլ, երկու շաբաթի չափ, մինչև որ առօք փառօք կներկայանայ հարսանեաց հանդէսը տղուն հօրը կողմանէ ամենայն ջերմեռանդութեամբ հարսանեաց պատրաստութիւններ կսկսին, հինգշաբթի օրէն նուագածուներ կբռնուին, և տղուն

բարեկամները նոյն գիշերէն կսկսին հաւաքուիլ, շաբաթ երեքշաբթի օրը կուկայ. իրիկուան ժամը 4ին տղան քանի մի բարեկամներով հանդերձ նուագածներով տնէ տուն կսկսի շրջիլ, թէ հրամայեցէք դինի խմել, ասանկով խուռն բազմութիւն մընէ կը խռնի տղուն տունը ըստ մեծի մասին երիտասարդներ խումբ խումբ կնստին և կսկսին անհագաբար ուտել և խմել և այլանդակ ձայներով ճչալ, խեղճ փեսան մէյմը մէկ խումբին քով մէյմը միւս խումբին քով կվազէ, չըլլայ թէ կռիւ մը պատահի ըսելով. երիտասարդներ մէկ կողմէն գլուխնին տաղցած ես չալը կուզեմին խօսքերը երևան կուգայ. միւսկողմէն աս ո՞վ է ես ասոր շալը պիտի տամ կրսէ ուրիշ գինով մը, ահա կռիւ մընէ կբրդի մէջտեղը, և հանդէսին տեսարանը կդառնայ պատերազմի դաշտ, ասանկով կյաջորդէ առաւօտեան լույսը, որ դարձեալ հրաւիրեալք հաւաքուելով նուագածուայ առաջնորդութեամբ բաղանիս կերթան՝ և հօն ալ շատ մը խայտառակութիւններ ընելնուն վերջը կդիմեն կընդահօր տունը, որ անիկայ ալ շատ մը պատրաստութիւններ տեսած է արդէն, հոն ալ կսկսին անհագաբար ուտել և խմել և կապիկի նման ցակրտել և բաւական նստելէն վերջը, կերթան անկէ ուղղակի փեսային տունը և անկէց ալ սատրիչին կբրպակը ածիլուելու համար, այն տեղի եղած խայտառակութիւնները դանց կ'ընեմ յիշելու, վերջապէս կրկին անկէց ալ կուղղուորին փեսային տունը, և կըպատրաստուին հարսի օրհնելու երթալ օրիորդիկին տունը, արամբ և կանամբ երիտասարդներ և օրիորդներ խուռն բազմութեամբ՝ և առաջներէն

նուագածուներուն խումբը, և հոն տեղ քահանան կուգայ հալաքը կօրհնէ ու կերթայ՝ անկէց վերջը նուագարանները կսկսին, և օրիորդներ և մատաղ հարսունք զոյգ զոյգ խաղալ ահագին բազմութեան մէջ և ասանկով վերջ կընեն հանդէսին, դարձեալ ուղղակի փեսային տունը կուգան, որ հարսնատեսրերը մէկ կողմէն պատրաստութիւնը կտեսնան իրիկուան փեսայ հագուցնելու հանդէսին, և իրիկուան ժամը Վին անհամար բազմութիւն կանանց և օրիորդաց հետերնին ունենալով խումբ մը ալ երիտասարդներ նուագածուաց առաջնորդութեամբ օրիորդիկին տունը կերթան «քնայի» հանդէսը կատարելու, հոն է ամենայն խայտառակութեանց տեսարանը. նախ կսկսին զոյգ զոյգ խաղալ յետոյ «քինան» կ՚խաղցընեն, վերջը կսկսին կանանց և օրիորդաց բազմութիւնը «ալթրն թաս իչինտէ դրնամ էզիլտիին» խաղը կանչել, մէկ կողմէն օրիորդիկը կ՚հինայէն որ ասանկով վերջ կուտան հանդէսին, և ժամը 3. ին կդառնան ուղղակի փեսային տունը խորհուրդ խորհելով հագուցընելուն հանդէսը կատարելու, դարձեալ առջի իրիկուան պէս խուռն բազմութիւն և ճիշդ նոյն տեսարանը կրկնայ առաւօտեան լոյսը կյաջորդէ հրաւիրեալը կպատրաստուին հարս առնել երթալու, կերթան օրիորդիկին տունը, որ արդէն փեսային կողմէն դացած կնոջ պատգամաւորներ քոդած պատրաստած են հարսնեցու օրիորդիկը, վերջապէս հոն տեղի դերն ալ կ՚լմցնեն և հոն տեղ դանուած բազմութիւնը, հետերնին ունեցած հրաշէնները բաթեցընելով շատ մը վնասներ պատճառելով ճանապարհին փեսան

ու հարսնեցուն Եկեղեցի կ՚երթան, և հետ դանուող երիտասարդներ նուագածուաց խումբը կառնեն շուկային մէջ տեղը կնստին, քսան երեսուն խումբ մէկտեղ և կսկսին շարունակ չորս հինգ ժամ օղի խմել, և կապիկի նման ցատկռտել, անհնար է հոս տեղի եղած խայտառակութեանց չափը պատմել, կռիւ, հայհոյութիւն. ևն. ասանկով Եկեղեցիին պատակը կըլլնայ, փեսան ու հարսը դուրս կելլան բազմութեամբ խառնիխուռն գիւղին բոլորը դարձընելով ուղղակի փեսային տունը կուգան ու կլցուին և կսկի «խալատ» խաղցընելու հանդէսը տեղի ունենալ, որ ամեն մէկը մէկ լաթ, և մէկ թաշկինակ փեսային և օրիորդիկ հարսին նուէրներ տալ, և ասիկայ կատարուելէն վերջը անհամար բազմութեամբ կելլան վեր, և մեծկակ լաթեր մէջ տեղը փռուելէն յետոյ, մէկ կողմէն կսկսին «հարխսա» և ուրիշ կերակուրներ կրուիլ այն լաթերուն վրայ հանդիսականք կսկսին անհագաբար ուտել խմել և այլանդակ զուարճութիւններ ընել, անկէց վերջը կպատրաստուին «եարրշ» երթալու դուրս տեղ մը անիկայ ալ լմնցընելէն ետքը, պատգամաւոր մը կուգայ հարսին մօրը կողմէն և փեսան ու հետի երիտասարդները հարսին մօրը տունը կհրաւիրէ. կերթան և կսկսին անճոռնի կերպով դարձեալ ուտել և խմել, և բաւական անկարգ զուարճութիւններ ընելէն յետոյ վերջ կուտան այն տեսարանին։

Գանք որ փեսային տունը այն երեկոյին առջի իրիկուան պէս երկու չափ ծախքի դուռ կբացուի կերակուրի համար վասն զի այն երեկոյին իրեն և հարսի կողմէն հրաւիրեալներ պիտի դան

պարդևատուութեան հանդէսը կատարելու, ժամը Վին վեսային կողմէն մէկ քանի երիտասարդ հանդերձ նուագարաններով կերթան հարսին հայրը և անոր կողմէն հրաւիրեալները կառնեն վեսային տունը կերթան, որուն հետ կդանուի շատ մը պղինձէ ամաններ հարսին պարգև տալու համար դարձեալ կուգան վեսային տունը կնստին մէկ կողմը, միւս կողմն ալ վեսային պարգև տալու համար եկող հանդիսականները կնստին, և բաւական բաքոսի խունկ ծխելէն վերջը, նուագարանի կռիւը դարձեալ երևան կուգայ երկու կողմին մէջ, և մարդկային զարմին չվայլած անտեղի գործեր ընելէն ետքը «ընծայ» կոչուին տալ, ու մէկ կողմէն ցրուիլ վեսան ալ իրերջոյ քանի մը երիտասարդ առնելով հետը նուագածուցց առաջնորդութեամբ կնքահօր տունը կերթան և դիշերը մինչ ի լոյս անքուն կենալով անտեղի եղած զեղխութեանց կպարապին, ասուաւոտուն կելլան վեսայով մէկ տեղ հարսնիքին տունը կուգան «խաչկերուկի հանդէսը կատարելու» և մինչև իրիկուն ուտելէն խմելէն ետքը՝ իրիկուան դարձեալ պատրաստութիւն կտեսնուի առջի իրիկուան պարդև չտուող մարդկանց՝ չեկողներուն համար դարձեալ առջի իրիկուընէն տարբերութիւն չունենալով վերջ կուտան նոյն խայտառակ հանդէսին։

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿՔ

Սխալ	Երես	Տող	Ուղիղ
կղեր	2	15	եղեր
կ'ելլայ	8	4	կելլան
կ'ատաթէին	9	18	կ'յատաթէին
քաղաք	16	1	գիւղ
ամենէն	26	14	ամենայն
դէպքերը	32	16	պէտքերը
մեր բերան	33	6	մէկ բերան
արևելեան	,,	18	արևելեան
կնային	33	6	կնային
անոր	36	11	յետոյ
ցան	,,	23	ցայն
տեսոր	37	29	այսօր
կ'համարուին	38	14	կ'դումարուին
կողման	,,	19	կողմէն
քինան	40	13	հինան

10 ա

ՀՀ Ազգային գրադարան
NL0001659

ՀՀ Ազգային գրադարան
NL0001660

5594-5600

ՀՀ Ազգային գրադարան
NL0001661

ՀՀ Ազգային գրադարան
NL0001662

000157

2013 "

ՀՀ Ազգային գրադարան
NL0001658

ՀՀ Ազգային գրադարան
NL0001663

ՀՀ Ազգային գրադարան
NL0001561